Հաստատում եմ:
Տնօրեն՝ Գ. Առաքելյան
01.09.2023թ.

IXա դասարանի 2023-2024 ուս. տարվա դասղեկական աշխատանքների պլան

Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հ/դ

Դասղեկ՝ Ն. Գրիգորյան

01 09 2023

nargrigoryan75@gmail.com

Համաձայնեցված է
ՄՄԽ ղեկավարներին՝
Ն. Գասպարյան

# Բովանդակություն


ԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ........ 2

ՐԹԱԿԱՆ -ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........ 2

ՀԱՅԵՑԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ........ 2

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ........ 2

ՌԱԶՄԱ_ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ........ 3

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ........ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ........ 3

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ........ 5

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ ........ 6

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ ........ 7

Ծնողական հանդիպումներ ........ 10

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ........ 13

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ........ 13

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ........ 14

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ........ 14

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ........ 15

ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ........ 15

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ ........ 15

ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ........ 17

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ ........ 17


Tiny Scanner

# ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

023-2024 ուսումնական տարին 9-րդ դասարանցիները սկսեցին 25 աշակերտով: Դասարանը կազմակերպված ,ձևավորված կոլեկտիվ է համախմբված են ,պատասխանատու,Նախորդ ուսումնական տարում ուսուցիչների կողմից որևէ խնդիր չի դիտարկվել,աշխատել են փոխադարձ հարգանքի և մրցման մթնոլորտում: Սովորողները համախմբված են ,ընկերասեր ակնառու է փոխադարձ հարգանքը:Մեծ սիրով և պատասխանատվությամբ են ներգրավվում դպրոցական բոլոր նախաձեռնություններին: Դասարանում մեծ տարբերություն կա սպորտի և արվեստի նկատմամբ : Ճիշտ է գերակշռում են բավարար առաջադիմությամբ աշակերտները ,բայց դա չի խանգարում կրթության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին:Բոլորը ձևավորված անհատներ են, սեփական կարծիքով ,նախաձեռնողականությամբ: Պատրաստակամ են կատարելու իրենց տրված ցանկացած հանձնարարություն ;

## ԿՐԹԱԿԱՆ -ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՀԱՅԵՑԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Ձևավորել հայրենաճանաչողության ձգտում և հայրենատիրության զգացում; Մշտական աշխատանք տանել հայրենասիրության խորը արմատներ ձևավորելու նպատակով: Հասնել հայրենքին ամուր կառչելու և հայրենիքը չլքելու գիտակցության ձևավորմանը:

### ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեխաների մոտ գեղագիտական ճաշակը զարգացնելու նպատակով, սովորեցնել գտնել , տեսնել ու գնահատել գեղեցիկը: Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և այցելություն մշակութային այլ կենտրոններ:Կազմակերպել բաց քննարկումներ և հանդիպումներ արվեստը և արհեստը ներկայացնող անհատների

Tiny Scanner

ետ :Իրականացնել այդ նպատակին ուղղված ստեղծագործությունների ուսումնասիրություններ ,ընթերցումներ և ննարկումներ :

ԱԶՄԱ_ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք. այն չի ձևավորվում միանգամից. դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, շարունակական աշխատանք պահանջում դպրոցում և դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Այդ նպատակին միտված կարևոր է հաճախակի կազմակերպել զրույց-քննարկումներ հայրենասիրական թեմաներով: Կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ , բաց դասեր նվիրված պատմական դեպքերին, Հայոց բանակի կազմավորմանը :Խոսել մերօրյա հերոսների մասին, կազմակերպել էքսկուրսիաներ պատմական վայրեր/ Եռաբլուր, Սարդարապատ…/:

Դիտել հայրենասիրության ու արիության ոգով տոգորված ֆիլմեր ու հաղորդաշարեր, կազմակերպել զրույց – քննարկումներ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետևել աշակերտների հիգիենային, շարժումներին, ճիշտ նստելու, գրատախտակից համապատասխան հեռավորությունից օգտվելու և նմանատիպ հարցերին: Դասերին ծանրաբեռնվածությունը թոթափելու, մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով կազմակերպել ֆիզիկական վարժություններ: Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին:
Անգամ կարելի է մի քանի րոպե ընդհատել դասը, հանձնարարել լիցքաթափող վարժանքներ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասարանում պահպանել մաքրություն, կարողանալ գնահատել իր , ընկերոջ ,դպրոցում աշխատող

աքրուհիների կատարած աշխատանքը, պահպանել և անհրաժեեշտության դեպքում վերանորոգել պրոցական գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատաանքը:Հետևողական աշխատանք տանել անոթացնելու տարբեր աշխատանքների,մասնագիտությունների հետ՝ նպաստել մասնագիտական կողմնորոշմանը:

Tiny Scanner

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար: Աշակերտները պետք է հասկանան ու գիտակցեն բնության կարևորությունը, սիրեն և պահպանեն այն:Մաքուր պահեն շրջակա միջավայրը: Մեծ ցանկությամբ և ջանասիրաբար մասնակցեն շաբաթօրյակներին և ծառատունկին: Անցկացնել զրույց «Ես բնության մի մասնիկն եմ» թեմայով: Պահանջել անհատական շփում բնության հետ, բնության գրկում:

## ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն:

Tiny Scanner

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ




Tiny Scanner

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

*Մոդելի նպատակը ընտանիք-դպրոց համագործակցության խթանումն է: Այն նպաստում է դաստիարակչական միասնական տարածքի ստեղծմանն ու ընտանեկան և դպրացական դաստիարակության ինտեգրմանը և կարող է ներդրվել ներդպրոցական կառավարման համակարգում:*

*Մոդելի հիմքում ընկած են երկու առանցքային սկզբունքներ.*

*Ծնողներն ու ուսուցիչները գիտակցում են, որ ա/ աշակերտն է իր զարգացման սուբյեկտը, իսկ մեծահասակները՝ այդ գործընթացում համահեղինակներ են, բ/ աշակերտը իրավունք ունի մասնակցելու իր կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունելուն: Ուստի ,մոդելի կենտրոնում աշակերտն է՝ իրեն վերաբերող հիմնախնդիրներով , որոնց լուծմանն ուղղված յուրաքանչյուր բաղադրիչի իրագործմանը ուսուցչի և ծնողի հետ միասին հնարավորություն ունի մասնակցելու նաև ինքը: Մոդելի բաղադրիչները լրացնում են միմյանց և ինտեգրվում՝ դառնալով մեկ ամբողջություն:*



**3**

Երեխաների անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության ոլորտում սերտ համագործակցության ապահովում: Դասվարի, երեխաների և ծնողների մասնակցությամբ դասարանական և դպրոցական կանոնների մշակում:

↔

- Ուսուցչի կողմից աշակերտների ֆիզիոլոգիական և հոգեբանական անվտագության պայմանների քննարկում ծնողների հետ՝ դասարանական և ընտանեկան առողջ մթնոլորտ ստեղծելու , երերեխաներին պիտակավորելը և ծաղրելը բացառելու, դասարանի և տան հարմարավետությունն ու վալեոլոգիական պահանջները պահպանելու նպատակով: Համատեղ քննարկումներ տանը և դպրոցում Երեխայի ազատության և իրավունքների իրացման համար պայմաններ և հնարավորություններ ստեղծելու նպատակով:

**4**

Երեխաների ուսումնաճանաչողական ձեռքբերումների համատեղ քննարկում. խոչընդոտների բացահայտում և նրա հետ անհատական զարգացման աջակցման ծրագրի մշակում

↔

- Ուսուցիչ-ծնող փոխադարձ տեղեկատվության փոխանցում և քննարկում՝ աշակերտների ուսումնադաստիարակչական նվաճումների, տնային և ինքնուրույն առաջադրանքների կատարման ընթացքում ծագած դժվարությունների և խոչընդոտների ու դրանց հաղթահարման վերաբերյալ:
- Աշակերտի համաձայնությամբ և ծնողի իմացությամբ աշակերտի անհատական զարգացման ծրագրի համատեղ մշակում՝ մանկավարժական աջակցության նպատակով:
- Ծնողական ժողովներին աշակերտների մասնակցության ապահովում:

**5**

Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ դասվարի, աշակերտների և դասարանական ծնողական կոմիտեի համատեղ գործունեության պլանավորում և իրականացում

↔

- Ուսուցչի նախաձեռնությամբ քննարկումների կազմակերպում ՝կամավորության սկզբունքով և ծնողների ընտրությամբ նրանց մասնակցությունը արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին ապահովելու նպատակով:
- Ծնողների կողմից իրենց երեխաների օգնությամբ մասնագիտության օրերի դասարանական միջոցառումների շարքի կազմակերպում

Tiny Scanner

**6**
Դպրոցի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործում ծնողական համայնքի մասնակցության ապահովում

- Ուսուցչի կողմից ծնողներին դպրոցի, դասարանի հոգսերին ծանոթացնելը՝ըստ ցանկության նրանց մասնակցությունը դպրոցի զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը ապահովելու նպատակով:

**7**
Դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծում և ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրում

- Ծնողներին դաստիարակչական միասնական միջավայրի և ընտանեկան ու դպրոցական դաստիարակության ինտեգրման մասին գիտելիքների, գաղափարների և այլ տեղեկատվության փոխանցում, տանը և դպրոցում երեխայի նկատմամբ միասնական պահանջների,հնարավորությունների և պայմանների ներկայացում ու ստեղծում:

**8**
Կրթության հաջորդ աստճանների հաջորդականության ապահովում, համատեղ գործունեության իրականացում

- Ուսուցչի կողմից դպրոցի հաջորդ աստիճանի անցման խնդիրների բացահայտում և ծնողներին ու աշակերտներին խորհրդատվության մատուցում:
- Ծնողների հետ, երեխայի մասնակցությամբ,յուրաքանչյուրի կարիքների, մտահոգությունների, խնդիրների և ակնկալիքների քննարկում և որոշման ընդունում՝ կրթության հաջորդ աստիճանին անցնելու վերաբերյալ:

Tiny Scanner

**Ծնողական հանդիպումներ**

| Հ/հ | Ամսաթիվ | Օրակարգ | Ներկա ծնողների թիվը | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | 08.09.23 | 1. Նոր ուսումնական տարվա դասղեկի աշխատանքային պլանի քննարկում<br>2. Նախորդ ուսումնական տարվա ծնողական խորհրդի աշխատաքների հաշվետվություն<br><br>3. Ծնողական խորհրդի ընտրություններ<br><br>4. Ընթացիք հարցեր | | |
| 2. | Հոկտեմբեր ամսվա ընթացքում | 1. Սովորողների ընթացիկ առաջադիմության քննարկում<br>2.Վայոց ձորի | | |

Tiny Scanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տարածքում իրականացվելիք ճանաչողական արշավի կազմակերպման հարցերի քննարկում<br>3. Ընթացիք հարցեր /հարց ու պատասխան | | |

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Դեկտեմբերի երկրորդ շաբաթ | 1. Կիսամյակի արդյունքների քննարկում,սովորողների առաջադիմության հարցերի քննարկում<br>2. Ընթացիկ հարցեր | |
| 4. | Հունվարի երկրորդ շաբաթ | 1. Առաջին կիսմյակի արդյունքների ամփոփում<br>2. Հանդիում դասարանում դասավանող ուսուցիչների հետ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | 3. Ընթացիկ Հարցեր | |
| 5. | Ապրիլի առաջին շաբաթ | 1. Առաջադիմության ընթացքի քննարկում/նախաքննական շրջան<br>2.Վերջին դասի հետ կապված իրականացվող միջոցառումների կազմակերպչական հարցերի քննարկում<br>3. Ընթացիկ Հարցեր | |
| 6. | Հունիսի երկրորդ շաբաթ | 1. Ավարտական քննությունների արդյունքների և տարեվերջյան արդյունքների ամփոփում<br>2.Էքսկուրսիայի ուղղության պլանավորում ,կազմակերպման հարցերի քննարկում<br>3. Ընթացիկ Հարցեր | |

Tiny Scanner

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Կազմակերպել դասագրքերի բաշխումը աշակերտներին ըստ դպրոցում հաստատված ժամանակացույցի:
Կազմել դասասենյակը մաքրելու հերթապահության գրաֆիկ:
Աշակերտների հետ համատեղ պլանավորել ուս.տարվա ընթացքում համատեղ աշխատանքները և դասղեկի ժամերին անցկացվելիք զրույցների թեմատիկան:
Ուսումնասիրել աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները, պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:
Հավաքել սպառիչ տեղեկություններ լրացուցիչ կրթության հաստա- տություններում, խմբակներում աշակերտների մասնակցության մասին: Աշակերտների ազատ ժամանակը ճիշտ կազմակերպելու նպատակով տանել բացատրական աշխատանք՝ ընդգրկելու նրանց դպրոցում գործող արտադասարանական խմբակներում:
Ընտրել դասարանի ավագ և աշակերտներին բաժանել ոլորտային պատասխանատվության խմբերի:

## ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում:
- Հետևել աշակերտների արտաքին տեսքին:
- Հետևել աշակերտների անձնական հիգիենային:
- Հետևել աշակերտների սնվելուն ու բարեկիրթ վարքին:
- Հտևել դասասենյակի մաքրությանը՝ ըստ նախապես կազմված հերթապահության գրաֆիկի:
- Ստուգել դասագրքերի և տետրերի առկայությունը ըստ դասացուցակի:
- Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին պատշաճ վարքագծին
- Հետևել դասարանի կողմից միջանցքներում հերթապահության պաշաճ իրականացմանը:
- Հնարավորինս կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները

Tiny Scanner

## ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Դասղեկի ժամերի իրականացում, պլանավորված զրույցների անցկացում:
- Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց ծնողների հետ:
- Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներ կայացնել:
- Ըստ անհրաժեշտության զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտների և նրանց ծնողների հետ:/ եթե նման աշակերտներ լինեն/

## ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:
- Լսել դասարանի ավագի հաշվետվությունը:
- Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին՝ բարձրացնելու առաջադիմությունը

Tiny Scanner

## ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Պահել ծնող- ուսուցիչ կապը:
- Հետևել դասագրքերի պահպանմանը:
- Կազմակերպել երեխաների առողջության պահպանման հետ կապված բժշկական երաշխավորությունների կատարումը:
- Անցկացնել ծնողական ժողովներ և պլանավորված զրույցներ:
- Հետևողական աշխատանք տանել ուսման առաջադիմության բարձրացման նպատակով:
-

### ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ
### ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

| Հ/հ | Կատարման ժամկետ | Թեմա | Կատարող անձ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | 06.09.22 | Կազմակերպչական հարցեր | դասղեկ | |
| 2 | 13.09.22 | Դասարանական խորհրդի կազմի հաստատում և աշխատանքի բաժանում | Դասղեկ | |

Tiny Scanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | 22.09 | „Մենք անկախության սերունդներն ենք„տողան | Դասղեկ | |
| 4 | 28.09 | Անձնական Հիգիենա գրույց | Դասղեկ, բուժքույր | |
| 5 | 05.10 | Իմ ուսուցիչը իմ կյանքում | ավագ | |
| 6 | 12.10 | Հայրենիք,ազգ,բանակ | դասղեկ | |
| 7 | 19.10 | Զրույց արտակարգ իրավիճակների շուրջ | Զինղեկ և դասղեկ | |
| 8 | 31.10 | Միջանձնային հարաբերություններ ,սեռական դաստիարակություն | Դասղեկ բուժքույր | |
| 9 | 06.11 | Առաջադիմության և բացակայությունների վերաբերյալ քննարկում | դասղեկ | |
| 10 | 13.11 | Մտքերի փոխանակում.„ինչ եմ ուզում դառնալ„ | Դասղեկ | |
| 12 | 22.11 | Աշնան գույները և ես | դասղեկ | |
| 13 | 28.11 | Իմ վարքագիծը հասարակական վայրերում | դասղեկ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | 04.12 | Դասարանի ջերմամեկուսացում | Դասարանական խորհուրդ | |
| 15 | 11.12 | Կինոդիտում «Գարեգին Նժդեհ» | Դասղեկ | |
| 16 | 17.12 | 1-ին կիսամյակի առաջադիմության քննարկում բացթողումներ ,ձեռքբերումներ/մեր ուժեղ և թույլ կողմերը | դասղեկ | |
| 17 | 22.12 | Կիսամյակի ամփոփում,վերլուծություն | Դասղեկ աշակերտներ | |

## ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

| Հ/հ | Կատարման ժամկետ | Թեմա | Կատարող անձ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | 12.01.24 | Դասարանի ոլորտային պատասխանատուների հաշվետվություն | Դասարանական խորհուրդ | |
| 2 | 19.01 | Զրույց առողջ սննդի ,առողջ ապրելակերպի և անձնական | Բուժքույր և դասղեկ | |

Tiny Scanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հիգիենայի կարևորության մասին | | |
| 3 | 26.01 | Իմ հենարանը մեր բանակն է | դասղեկ | |
| 4 | 02.02 | Կարգապահության և առաջադիմության խնդիրների քննարկում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկ | |
| 5 | 09.02 | Հռետորրկան խոսք,հաղորդակցման ,բանակցելու հմտություններ | դասղեկ | |
| 6 | 16.02 | Ընթերցանությունը՝ մտքի վարժանք | Դասղեկ և գրադարանավար | |
| 7 | 23.02. | Մեր լեզուն մեր խիղճն է դա Քննարկում մայրենիի կարևորության մասին | դասղեկ | |
| 8 | 02.03 | Գարունը այնքան ծաղիկ է վառել/զրույց գեղեցիկի մասին/ | դասղեկ | |
| 9 | 09.03 | Մայրության և գեղեցկության տոնը /մեր սերը և նվիրումը մայրերին ,կանանց և քույրերին/ | Դասարանի տղաներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | 16.03 | Ինչպես խուսափել վիրուսային ախտերից Մեր վարքագիծը համաճարակների ժամնակ | Բուժքույր ,դասղեկ | |
| 11 | 23.03 | Մեր մեծերը | Դասղեկ | |
| 12 | 04.04 | Տարիքային առանձնահատկություններ և վատ սովորություններ | Դասղեկ հոգեբան | |
| 14 | 11.04 | Ինչ է գեղեցիկը. գեղեցիկը իմ պատկերացմամբ | դասղեկ | |
| 15 | 18.04 | Հաճախումների և կարգապահության քննարկում | Փոխտնօրեն,դասղեկ | |
| 16 | 25.04 | Ապրելու ապրիլ. հայ դատ և հայկական հարց . արդիականություն | Պատմության ուսուցիչ դասղեկ | |
| 17 | 02. 05 | Ազգային տոներ /սովորույթներ,խոհանոց/ | Դասղեկ Թանգարանի աշխատակից | |

Tiny Scanner

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 18 | 16. 05 | Ինչ է նախասիրությունը | դասղեկ | | |
| 19 | Մայիս | Վերջին դաս | Դասղեկ<br>տնօրենություն | | |

Tiny Scanner